Իսկ եօթնևտասաներորդ, զի նստին յատուհան եկեղեցւոյն և ամենեքեան պարառեալ երկրպագեն Թագաւոր զնա կարդալով։

Իսկ ութևտասաներորդ սովորութիւն է, այլ ոչ դառնալ 'ի տուն հարսին, այլ երթան 'ի տուն հօրն փեսային։

Իննևտասաներորդ սովորութիւն է, 'ի տեղի բարձր նստիլ որ ակներև ամենեցուն տեսանիցի. ոչ ուտել և ոչ ըմպել մինչև ցերեկոյ. իսկ երեկոյն առաջի իւրոցն ուտել սակաւ ինչ։

Քսաներորդ, զի եօթն օրն... անանացն, որչափ նստի փեսայն[1]........ նախատինս տան հարսն քուերն։

Քսաներորդ առաջներորդ, զի յետ եօթն աւուր բառնի պսակն և ապա հրաման մերձաւորութեան յետ ութ աւուրն։

## ՏԱՂ

## Ի ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

(Հին քնար)

Այսօր պանծալի երգով գոչեմք և մեք
Ի ձայն քաղցրութեան Նուագ.
Ճախնեացըն մեծաց առաքելոց զընդդին՝
Նըմանող լիցուք յորդորական ըղձիւ.
Պասուց երկնայնոց հանդիսակից գոլով
Վարուք մաքրութեամբ հանդիպեսցուք տօնիս.
Ջոպէից կազմիչ Հոգին Աստուած այսօր
Ի ձայն սաստկութեան հողմոյ հընչեաց յաշխարհս.
Ժ հրաձև տեսակ անուշահոտ բուրմամբ
Լըցան արարածք և սրբեցան վարուք.
Ահիւ տագնապեալ այլալեզու Հրէիցն
Ճեպով ընթացեալ 'ի վերնատունըն սուրբ։
Սարսեալ զողային յօտարաձայն լեզուացն
Անտեղեակք եղեալ զմարգարէին առածն.
Ժ Հոգւոյն շարժեալ Վէմն հաւատոյ այսօր,
Տարածեաց զուռկանն աստուածային բանին.
Երրակի անձանց երիս հազարս որսաց.
Արկիրս նոր երկին զարդարեցաւ այսօր
Առ քեզ գալստեամբ ամենիմաստ Հոգւոյն
Աստուածպետական նոր նորոգեալ զեղեալքս.
Ջաքունն 'ի բարձանց մինն յերից Հոգին,
Ցայտնեաց ըղխորհուրդս Հօր և Որդւոյ մարդկան,
Մաքրեաց զարարածս 'ի գիւտմոլ զոհիցն.
Քաջմամբ ձայնակից ընտրեալ հօտին այսօր
Լիցուք խըմբակից եկեղեցւոյ մանկանց,
Զփառս 'ի վեր երգել Երրորդութեանն միշտ։

---

1 Ցնդեմանէ թղթոյն և գրոցն՝ անընթեռնլի մնան բառքն։